



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍՅԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ Ս. ԶԱՌԱՄԱՆԻՑ ՄԱՆԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

### - ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵԶ

Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, այս տարի Կիրակի, 29 Յունիսը, տօնն է մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան, որ ծանօթ է նաեւ Վարդավառ անունով:

Այս առիթով, Օրենք Քառութիի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մեջ Ս. Պատարագը պիտի մատուցէ եւ օրուան խորհուրդը Ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը:

Նկատի ունենալով, որ նոյն օրը նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Գահակալ Ս.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման 13-րդ տարեդարձն է, Առաջնորդ Սրբազն Յօր տնօրինումով, Թեմիս Եկեղեցիներուն մեջ տեղի պիտի ունենայ Յայրապետական Մաղթանք:

Ս. Պատարագի աւարտին, Եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահին մեջ տեղի պիտի ունենայ սիրոյ ճաշ, որուն ընթացքին հաւատացեալները առիթ պիտի ունենան Առաջնորդ Սրբազննը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ Վերջնտրութեան առիթով:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, ժամը 2:30-ին, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազնին եւ կազմակերպութեամբ Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ հովիւն, հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան, հոգեւոր դասախոսութիւն մը տեղի պիտի ունենայ Եկեղեցւոյ մեջ: Պիտի դասախոսէ՝ Յոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիլիմեան, Նիւթ ունենալով, «Քրիստոնեական Դաստիարկութիւնը եւ Յայ Երիտասարդը»:

Երեկոյեան ժամը 5ին, Առաջնորդ Սրբազննը պիտի նախագահէ Օրենք Քառութիի Յայ Կեդրոնի Վերանուանումի արարողութեան:

Ծանօթ է, որ Փրոֆ. Յարութ Պարսամեան իշխանական Նուիրատուութիւն մը կատարած էր ի նպաստ Եկեղեցւոյ կողքին կանգնած Յայ Կեդրոնին, հետեւաբար, Կեդրոնը պիտի կոչուի անոր անունով:

## **PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AND PRESIDE OVER PONTIFICAL THANKSGIVING PRAYER AT FORTY MARTYRS CHURCH**

Sunday, June 29<sup>th</sup>, is the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ which is also known as *Vartavar*. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at Forty Martyrs Church in Orange County.

Given that it is also the 13<sup>th</sup> anniversary of the election and consecration of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, by the ordinance of the Prelate Pontifical Thanksgiving prayers (*Hayrabedagan Maghtank*) will be offered in all Prelacy Churches. The Prelate will preside over the Pontifical prayer service at Forty Martyrs Church during Divine Liturgy.

Following Divine Liturgy, a reception will take place at "Gugasian" Hall where faithful will have the opportunity to congratulate the Prelate on his re-election.

At 2:30 p.m., Very Rev. Fr. Barthev Gulumian will lecture on the topic, Christian Education and the Armenian Youth. The lecture has been organized by the parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary.

At 5:00 p.m., the Prelate will preside over the renaming ceremony of the Armenian Center which will be named in honor of Professor Harout Barsamian who recently made a generous donation to the center.

### **ԿԻՐԱԿՄՈՒՏՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵԶ**

Մեր Եկեղեցոյ տօնացոյցին համաձայն, յառաջիկայ ծաբաթ, 5 Յուլիսը տօնն է Հայաստանի Առաջին Նահատակներուն՝ Ս. Թադէոս Առաքեալին եւ Ս. Սանդուխտ կոյսին:

Այս առիթով, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդաս եւ Ս. Աշխեն» մատրան մեջ Կիրակմուտքի ժամերգութիւն տեղի պիտի ունենայ Երեկոյեան ժամը 6-ին, Նահապահութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր եւ մասնակցութեամբ Եկեղեցականց դասուն:

## **EVENING SERVICES AT THE PRELACY CHAPEL ON THE FEAST OF ST. THADDEUS AND ST. SANTOOKHT**

Saturday, July 5<sup>th</sup>, is the Feast of St. Thaddeus and St. Santookht, the first martyrs of the Armenian nation. On this occasion, the Prelate will preside over evening services at the "St. Dertad and St. Ashkhen" Chapel. Clergy members will also participate in the service which begins at 6:00 p.m.

## ՆՈՐ ՕՐՅՆՈՒԱԾ ՄԻՒՈՈՆՈՎ ԶՐՈՐՅՆԵՔ ԹԵՍԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՍԵԶ

Արեւմտեան մեր Թեմի հաւատացեալ ժողովուրդը Կիրակի, 22 Յունիսին ապրեցաւ հոգեպարար օր մը, գործնապէս հաղորդակից դառնալով երկու շաբաթ առաջ, Ս. Աթոռոյս Անթիլիհասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած Սիւռոնօրինեքի արարողութեան, որ մեր Եկեղեցւոյ իրայատուկ ու ամենեն նուիրական արարողութիւններէն մէկն է:

Արդարեւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տևօրինումով, անցեալ շաբաթ, մեր Եկեղեցիները ունեցան նոր օրինուած միւռոնեն բաժին մը, որ գործածուեցաւ Կիրակի օր տեղի ունեցած ջրօրինեքի արարողութեան ընթացքին: Յաւարտ Ս. Պատարագի, մեր ժողովուրդը օրինուած ջուր տարաւ տուն, Սրբալոյս Միւռոնի օրինութեամբ ոգեղէն լոյսով թարմացնելու համար իրենց ընտանեկան օճախներու մթսուլորտը:



Առաջնորդ Սրբազանը այս առիթով նախագահեց Ս. Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ կատարեց ջրօրինեքը, մասնակցութեամբ Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապագեանի եւ քահանայ հայրերու: Արարողութեան ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապէտ Դոկտ. Կարօ Յակոբեան, ժողովականութեան

անդամներ եւ մեծ թիւով հաւատացեալներ:

Այս առիթով իր արտասանած պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը խօսեցաւ Յայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ Սրբալոյս Միւռոնի դերակատարութեան՝ անոր կամրջողի հանգամանքին մասին, նշելով որ 7 Յունիսին, Անթիլիհասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած հոգեպարար արարողութիւնները պատմական օրեր եղան:

Յայտնենք, որ ջրօրինեքի արարողութիւն տեղի ունեցաւ Թեմիս հեռակայ շրջաններուն մէջ եւս: Արժ. Տ. Խորեն Ա. Ջինյ. Յապէշեան Պատարագեց ու ջրօրինեք կատարեց Ջուրուատոյի Յայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքին մէջ, Յոզշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան Պատարագեց ու ջրօրինեք կատարեց Ջորոնայի մէջ, իսկ Գերա. Տ. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան յառաջիկայ Կիրակի պիտի այցելէ Սան Ֆրանսիսքօ եւ Վարդավառի տօնին առիթով ջրօրինեք պիտի կատարէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ: Ծանօթ է, որ Առաջնորդ Սրբազանը, Լաս Վեկասի ծխական համայնքին իր տուած այցելութեան առիթով, 15 Յունիսին, Ս. Պատարագ մատուցած էր ու կատարած՝ ջրօրինեքի արարողութիւնը:

## **BLESSING OF WATER WITH NEW HOLY MURON TAKES PLACE IN PRELACY CHURCHES**

On Sunday, June 22<sup>nd</sup>, by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the blessing of water with new Holy Muron took place in all Prelacy Churches during Divine Liturgy. The water was distributed to the parishioners at the conclusion of the Liturgy so for them to be renewed by the revitalizing Holy Muron.



The Prelate presided over Divine Liturgy at Holy Martyrs in Encino and conducted the blessing of water with the participation of H.E. Archbishop Yeprem Tabakian and clergy members. Executive Council Chairman Dr. Garo Agopian, council members, and a large number of faithful were in attendance.

In his sermon the Prelate spoke of the blessing of the Holy Muron which had taken place two weeks prior on June 7<sup>th</sup>, and emphasized the deep significance of the Muron for the Armenian Apostolic Church and in the lives of each individual faithful as the bridge to our centuries-old spiritual values.

The blessing of water also took place in the distant parishes of the Prelacy by Archpriest Fr. Khoren Habeshian at the Armenian Apostolic Church of Colorado and the Rocky Mountain

Region, and Very Rev. Fr. Barthev Gulumian at the Corona, Riverside County parish. On Sunday, June 29<sup>th</sup>, the blessing of water will take place at St. Gregory Church in San Francisco by Very Rev. Fr. Muron Aznikian. The blessing of water at the Las Vegas parish was conducted by the Prelate during Divine Liturgy on Sunday, June 15<sup>th</sup>.

### **Յ.Յ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՐՁԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ**

Յ.Յ. Միացեալ Նահանգներու Արեւմտեան Ծրջանի Կեղրոնական Կոմիտեին Ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Կ. Կոմիտեի Ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեանի, Երեքշաբթի, 24 Յունիսի Երեկոյեան այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Պատուիրակութիւնը Եկած էր Առաջնորդ Սրբազնը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ իր վերընտրութեան առիթով:

Յանդիպումին մասնակից Եղան Ազգային Վարչութեան անդամները: Առաջնորդ Սրբազնին ու Ազգ. Վարչութեան ընտրութիւնը շնորհաւորելէ

Ետք, Տիար Ա. Իզմիրլեան անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի ու ժողովականութեան առաքելութեան եւ մաղթեց, որ յառաջիկայ փուլին, Առաջնորդ Սրբազնան ու Ազգ. Վարչութիւնը իրենց ժողովրդանուեր առաքելութիւնը իրականացնեն բազմապատկեալ կորովով ու մեր ժողովուրդին աճող կարիքներուն հասնելու կամքով:



Ողջունելով  
պատուիրակութիւնը, Առաջնորդ  
Սրբազնը շնորհակալութիւն  
յայտնեց շնորհաւորական  
արտայայտութիւններուն մասին, ապ  
անդրադարձաւ Ազգ.  
Առաջնորդարանի ու անոր հովանիին  
տակ տարուող աշխատանքներուն ու  
ապագայի ծրագիրներուն: Ան յատուկ  
կերպով կանգ առաւ նոր սերունդի  
հոգեմտաւոր դաստիարակութեան  
պահանջներուն վրայ, որոնք կը հոգացուին մեկ կողմէ՝ երիտասարդական  
միութեանց ու միւս կողմէ՝ մեր վարժարաններուն ու կիրակնօրեայ  
դպրոցներուն ճամբով: Խորհրդակցութեան նիւթ եղան յատկապես  
երիտասարդութեան ու ընդհանրապես մեր ժողովուրդին դիմագրաւած  
այժմեական հարցերը եւ անոնց դարմաններ գտնելու միջոցները:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, որ իր կարգին, անդրադարձաւ ազգային հաստատութեանց ու միաւորներու միջեւ գործակցութեան դաշտերուն ու զանոնք աւելի եւս զարգացնելու միջոցներուն:

Հետեւեցաւ մտերմիկ զրոյց, որուն աւարտին, Առաջնորդ Սրբազնը 7 Յունիս Միլոնօրինեցը խորհրդանշող յուշանուերներ յանձնեց հիւր պատուիրակութեան անդամներուն:



Մօտաւորապես մեկ ժամ տեւած հանդիպումը վերջ գտաւ սերտ գործակցութիւնը շարունակելու եւ զայն աւելի եւս խորացնելու պատրաստակամութեան արտայայտութեամբ:

## DELEGATION FROM THE A.R.F CENTRAL COMMITTEE VISITS THE PRELACY

On the evening of Tuesday, June 24<sup>th</sup>, a delegation from the A.R.F. Central Committee visited the Prelacy where they were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council members. They delegation, which was headed by Mr. Avedik Izmirlian, had come to congratulate the Prelate on his re-election to a fourth term.

After congratulating the Prelate and Executive Council on their elections, Mr. Izmirlian conveyed his wishes for the successful realization of the future endeavors of the Prelacy and Councils in their mission to provide for the needs of our community.

The Prelate greeted the members of the delegation and outlined the work that is carried out by the Prelacy and committees functioning under its jurisdiction. The Prelate put special emphasis on the needs of our youth, which are being provided for by the Prelacy youth groups, day schools and Sunday schools, the challenges facing our youth and community in general and means in which to overcome them.

Remarks were also offered by Executive Council Chairman Dr. Garo Agopian who spoke of the collaboration that exists between the various community organizations and of ways to develop and enhance that cooperation.

The meeting concluded with the Prelate presenting the guests with mementos from the Blessing of Holy Muron.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՉ ԸՆԴՈՒՆԵԱՅ ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Երեջաբթի, 24 Յուլիսին ընդունեց Հայաստանեայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Եղբայրակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, որ Ազգ. Առաջնորդարան Եկած էր Առաջնորդ Սրբազնը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ Վերջնտրութեան առիթով: Հանդիպումի մասնակից եղան Ազգ. Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերապ. S. Միւռու Շ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:



Առաջնորդ Սրբազնը հետաքրքրուեցաւ Եղբայրակցութեան գործունեութեամբ ու ծրագիրներով, միաժամանակ բարձր գևահատելով անոր գործունեութիւնը, որ կը մնայ հաւատարիմ՝ քրիստոնէական հաւատքին ու ազգային արժեքներուն հանդեպ ու ճիզ կը տարուի զանոնք նոր սերունդին փոխանցելու համար:

Պատուիրակութեան անդամները տեղեկութիւններ տուին իրենց տարած աշխատանքին մասին, որ կը տարածուի Լիբանանին մինչեւ մեր ավերը, ընդգծելով, որ Եղբայրակցութեան գործունեութիւնը կը տարուի մեր Եկեղեցւոյ դարաւոր ժառանգութիւններուն ու կանոններուն հաւատարմութեամբ, հեռու՝ մոլորեցնող ազեցութիւններէ:

Յանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազնը 7 Յունիսի Միջոնօրինեցը խորհրդանշող յուշանուերներ յանձնեց պատուիրակութեան անդամներուն, միաժամանակ շեշտելով, որ Ազգ. Առաջնորդարանը պիտի շարունակէ սերտորեն գործակիլ Եղայրակցութեան հետ:

## **PRELATE WELCOMES A DELEGATION FROM THE ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD**

On the morning of Tuesday, June 24<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed a delegation from the Armenian Ecclesiastical Brotherhood who had come to congratulate the Prelate on his re-election to a fourth term. Christian Education Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian participated in the meeting as well.

The Prelate commended the members for the work they carry out, which involves passing on our Christian faith and national values to the next generation. The delegation reported on their activities, which is in keeping with traditions and canons of our church, and which spans from Lebanon to the Diaspora.

At the conclusion of their meeting the Prelate presented the members with mementos from the Blessing of Holy Muron which took place on June 7<sup>th</sup>, and stressed that the collaboration between the Prelacy and the Ecclesiastical Brotherhood will continue.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍԱՐԱՅԿԱԿԱՆ ՀԻՄԱԿՐԱՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Երեքշաբթի, 24 Յունիսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազնը ներկայ եղաւ Յայաստան Յամահայկական Յիմսադրամի կազմակերպած ընդունելութեան, որ տեղի ունեցաւ Կլենտել «Յիլթըն» պանդոկին մէջ, եւ փոխանցեց իր օրինութիւնները, զօրակցութիւնն ու յաջողութեան մաղթանքները:

Ընդունելութեան ներկայ էին Յայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմեն Լիլոյեան եւ Յիմսադրամի վարչութեան անդամներ: Ներկայ էր նաև Millennium Challenge Corporation-ի Յայաստանի բաժանմունքի պատասխանատուն՝ Տիար Արա Յովսեփեան, որ ծրագիրներու մասին տեղեկութիւններ փոխանցեց: Այս կազմակերպութիւնը հաստատուած էր Յայաստանի եւ Սիացեալ Նահանգներու կառավարութեան համաձայնութեամբ, Յայաստանի բարգաւաճման ու զարգացման համար:

Յայտնենք, որ 2 Յուլիսին, Յիմսադրամի Լու Անճելըսի խորհուրդը պիտի գումարէ ժողով մը, լսելու համար վերջերս, Յայաստանի մէջ հիմսադրամի հոգաբարձական խորհուրդի ժողովին մասին գեկուցում մը, որուն օրակարգի գլխաւոր նիւթերն մէկն էր յառաջիկայ թելեթոնին նախապատրաստական աշխատանքները: Առաջնորդ Սրբազնը եւ Ազգ. Վարչութեան անդամ Տիար Սիեր Տեր Յովաննեսեան ներկայ պիտի ըլլան ժողովին:

## **PRELATE ATTENDS ARMENIA FUND RECEPTION**

On the evening of Tuesday, June 24<sup>th</sup>, a reception organized by Armenia Fund took place at the Glendale Hilton with the participation of Mr. Ara Hovsepian, Chief Executive Director of the Millennium Challenge Account – Armenia, who gave the guests information about the projects of the MCC.

The Prelate attended the reception and conveyed his blessings, support, and well wishes. Consul General of Armenia the Honorable Armen Liloyan also participated in the meeting as well as board members.

On July 2<sup>nd</sup> the Prelate and Executive Council member Mr. Meher Der Ohanessian will participate in the Armenia Fund Corporate Board Meeting, during which the outcome of the recent international board meeting in Armenia will be discussed as well as preparations for the Telethon.

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆՂՈՒՏԵՑ «ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ**

Երեքաթի, 24 Յունիսի կեսօրին, Առաջնորդ Սրբազանը Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը «Հայ Մշակոյթի Բարեկամներ» կազմակերպութեան ներկայացուցիչներուն, որոնք շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազան հայրը՝ Վերըստրութեան առիթով, եւ տեղեկութիւններ տուին իրենց մշակութային աշխատանքներուն մասին. անոնք թատրական վեց ներկայացումներու համար Լու Անձելը հրաւիրած են Թիֆլիսի Պետրոս Աղամեան թատրախումբը. Ներկայացումները նախատեսուած են Սեպտեմբեր եւ Հոկտեմբեր ամիսներուն, Կլենտեյլ Հայ Սրուլի հանդիսարահին մէջ:



### **PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM “THE FRIENDS OF ARMENIAN ARTS”**

On the afternoon of Tuesday, June 24<sup>th</sup>, the Prelate welcomed a delegation from “The Friends of Armenian Arts”. The representatives had come to congratulate the Prelate on his re-election, as well as to convey information about their work with the Tbilisi’s Petros Adamyan State Armenian Drama Theatre. They reported to the Prelate that the theatre troupe is scheduled to perform in September and October at Glendale High School. The Prelate wished the representatives success in their future endeavors.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԶ AUTISM-Ի ԴԱՐՄԱՆՈՒՄԻ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹԻՉՆԵՐԸ**

Չորեքշաբթի, 25 Յունիսի կեսօրին, Թեմիս բարեհսամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Հայաստանի մեջ Autism հիւանդութեան դարմանումին յատուկ ուսումնարան-դարմանատան Ներկայացուցիչները՝ Տոք. Իրա Յելվեյլը, անոր գործակիցներէն՝ Արփի Արապեանն ու Արփինե Աւտալեան-Սարգսեանը, որոնք Ազգ. Առաջնորդարան եկած են Առաջնորդ Սրբազնին ծանօթացնելու իրենց աշխատանքին բնոյթն ու կտրած ճամբան:



Յիւր Ներկայացուցիչները առաջին հերթին մանրամասնութիւններ փոխանցեցին Autism հիւանդութեան մասին, ըսելով, որ սա կանուխ մանկութեան նշմարուող հիւանդութիւն մըն է, որ շղային դրութեան ու մեքենական այլ դրոյթներու անկանոն գործունեութեամբ կ'արտայայտուի: Յազուադեպ այս ախտը տարածուած է աշխարհի բոլոր ժողովուրդներուն մեջ եւ անոր դարմանումին ու անով ախտաճանաչուած մանուկներու հոգածութեան լծուած է Autism International Foundation-ը: Նման պարագաներ արձանագրուած են նաեւ Հայաստանի մեջ. յիշեալ միջազգային հիմնարկը հայ մանուկներու հետ գործելու առաջին առթջը ունեցած է 2006ին ու աշխատանքը զարգացնելով՝ Երեւանի մեջ հաստատած է ուսումնարան-դարմանատուն մը:

Տոք. Յելվեյլ յայտնեց, որ պատուիրակութեան այցելութեան նպատակն է առաջին հերթին Առաջնորդ Սրբազնը տեղեակ պահել, թէ նման հաստատութիւն մը կը գործէ Հայաստանի մեջ, ապա նաեւ՝ խնդրել անոր օրինութիւնն ու կարելի աշակցութիւն:

Առաջնորդ Սրբազնը բարձր գևահատեց նուիրեալ ծառայողները, որոնք յանձն առած են մարդասիրական առաքելութիւն մը: Ան յաւելեալ լուսաբանութիւններ խնդրեց հիւանդութեան ու հաստատութեան աշխատանքի բնոյթին մասին: Ան յայտնեց, որ մեր ժողովուրդն ու բարեսիրական միաւորներ աշակցութեան ձեռք կ'երկարեն նման ծառայողներու եւ իր կարգին, պատրաստակամութիւն յայտնեց կարելիին սահմաններուն մեջ նպաստ բերելու այս աշխատանքին:

### **PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF AUTISM INTERNATIONAL FOUNDATION**

On the afternoon of Wednesday, June 25<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed representatives of Autism International Foundation who had come to the Prelacy to familiarize the Prelate with their

work and mission. The delegation was comprised of President Dr. Ira Heilveil, Arpi Arabian, and Arpine Avdalyan-Sargsyan.

To begin with, the representatives conveyed details to the Prelate about the nature of the disorder and reported that the Autism International Foundation provides services to children diagnosed with the disorder domestically as well as internationally.

Members of the foundation first had the opportunity to work with Armenian children in 2006 and now provide services to autistic children in Armenia through the Armenian International Child Development Center in Yerevan. Dr. Heilveil went on to say that the purpose of their visit was primarily to keep the Prelate informed of the work of the center in Armenia, and to receive his blessings and support.

The Prelate highly commended the representatives and the foundation for their and requested further information on the nature of their humanitarian work as well as expressed his full support of their endeavors.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Հ.Ս.Ը.Ս.Ի ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՅԱՆԴԵՍԻՆ**

Ծաբաթ, 28 Յունիսի երեկոյեան, Studio City-ի CBS Studio-ի մեջ տեղի պիտի ունենայ Հ.Ս.Ը.Ս.Ի 33-րդ Նաւասարդեան խաղերուն առիթով յաղթանակի պարահանդեսը, կազմակերպութեամբ Հ.Ս.Ը.Ս.Ի Ծրչանային Վարչութեան եւ պատույ նախազահութեամբ Տեր եւ Տիկին Վահագն ու Պայծառ Թովմասեան ամոլին: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրինութիւնները:

Յայտնենք, որ 3Են 6 Յուլիսին, տեղի պիտի ունենան Հ.Ս.Ը.Ս.Ի Նաւասարդեան մարզախաղերու աւարտականները, փառատօնն ու փակման հանդիսութիւնը, Պղրմինկիեմ Յայ Սքուլի համալիրին մեջ:

### **PRELATE TO ATTEND 33<sup>RD</sup> NAVASARTIAN VICTORY BALL**

On the evening of Saturday, June 28<sup>th</sup>, the 33<sup>rd</sup> Navasartian Victory Ball will take place at CBS Studio Center in Studio City. The Ball has been organized by the Homenetmen Regional Executive. The Prelate will attend and convey his blessings.

The 33<sup>rd</sup> Navasartian Games/Festival will take place from July 3<sup>rd</sup> to the 6<sup>th</sup> at Birmingham High School.